

ՎԱՍՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆԸ

Իրադավ անձանի գիտնական, գրականագետ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Լենինգրադի Համալսարանի արտասահման զբոսականության ամբիոնի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ Բորիս Բեռնշտեյն Ռեկոմենդի ծննդյան 70-ամյակը:



Ռեկոմենդի ֆրանսիական գրականության խոշորագույն պատմաբան-տեսաբան է, մոտ 350 աշխատությունների հեղինակ:

Սնչել է Դոնի Նախիչևանում, Լադալյան ճամբարում, ունի, առաջագիմ հասարակական գործիչ, Նոր Նախիչևանի «Լույս» գրական-հասարակական շաբաթաթերթի խմբագիր (1910—1914 թթ.), Լոմիշի Գեորգ Ռեկոմենդի ընտանիքում:

Պատանեկությունը անցել է Նոր Նախիչևանի ազդեցունակության և ազդատաճականման հոգսերով ասլորող մտավորականների շրջանում:

Ավարտելով Ռոստովի համալսարանը, Ռեկոմենդի ուսանել է ասպիրանտուրայում, պաշտպանել թեզիսական դիսերտացիա և գիտական կազմակերպական գործունեություն ծավալել սկզբում դասավանդելով Ռոստովի մանկավարժական ինստիտուտում, իսկ 1935 թ. Լենինգրադի համալսարանում: Բալզակի ստեղծագործությունը նվիրված դոկտորական դիսերտացիան պաշտպանելուց հետո, 1939 թ., նա ընտրվում է Լենինգրադի համալսարանի արևմտա-եվրոպական գրականության ամբիոնի պրոֆեսոր (ուր պաշտոնավարում է մինչ այսօր), հետագայում ստեղծվելով այդ ամբիոնի վարիչի պարտականությունը:

Փայլուն սկսած գիտական-մանկավարժական գործունեությունը ընդհատվում է պատերազմի պատճառով: Կատարելով իր հայրենասիրական պարտքը, Ռեկոմենդի մնում է պաշարված Լենինգրադում՝ դառնալով նրա աղետների և սխրանքների ականատեսը:

Հետպատերազմյան տարիներին պրոֆ. Ռեկոմենդի իր գիտական և մանկավարժական գործունեություն ծաղկման շրջանն է ապրում:

XIX դ. ֆրանսիական գրականությունը ներկայացնում ուսումնասիրությունները նրան հաջողեցրել են այն համոզմանը, որ գրական երեվույթների խորը իմաստավորումը անհնար է. և թե անտեսվում են գրական սրտցեսի միասնականության և համաշխարհային գրականության զարգացման օրինաչափությունները:

Նվիրական մի շարք լեզուների իմացությունը Ռեկոմենդին հնարավորություն ավելց ըզբաղվելու գրականության զարգացման գուգահեռականության ընդհանուր հարցերով:

Նրա ուսումնասիրություններն ապացուցում են, որ շկան լրիվ անջատված գրականությունն է, որ դրանք փոխադարձաբար կապված են միմյանց հետ կամ ծնող պայմանների ընդհանրությամբ, կամ զարգացման պրոցեսի նմանությունով, կամ էլ անմիջական շփումներով և փոխադրեցություններով:

Այսպես, ռուսական ուսմանտիկական պատմագրությունը գրքում (1956 թ.) ցույց է տրված, թե ինչ դեր խաղացին պատմության առաջընթացի անխուսափելիության դադարա-

րով հագեցած Վալտեր Սկոտի պատմավեպերը 20-ական թվականներին՝ Ֆրանսիայում պատմության նոր փրիսոփայության մշակման գործում։ Իսկ «Ֆրանսիական պատմավեպեր ուսման տիգմի դարաշրջանում» (1958 թ.) աշխատության մեջ նկարագրվում է նոր ժանրի ծագումը և զարգացումը, որպես առաջին թաղափարի համար մղվող հասարակական պայքարի ձևերից մեկը, որը նույնպես տեղի է ունեցել Վ. Սկոտի փորձի յուրացման և վերափոխման միջոցով։

Համեմատական ուսումնասիրությունները, սակայն, ըստ Ռեիզովի արդյունավետ են միայն այն դեպքում, երբ հետազոտությունները զննում են ոչ թե «ազդեցության» մակերեսային ապացույցների և «պրիորիտետի» փաստերի վկայակոչության, այլ տարբեր գրականություններում համեմատման երևույթների բացատրությունները որոնելու և բնութագրելու հետազոտությունը, որը վերջին հաշվով միայն նյութը հանդամանալի և խորը հետազոտելու միջոց է։

Ֆրանսիական և այլ գրականությունների (ուսական, անգլիական, գերմանական, իտալական, իսպանական, պորտուգալական և այլն) կապերը քննարկող բազմաթիվ ուսումնասիրություններում Ռեիզովը միշտ էլ հետևի է եղել փաստերի միմյանց էմպիրիկ և միակողմանի արձանագրություններին։

Ռեիզովը հետազոտել է XIX դ. Ֆրանսիայում գերիշխող գրական ձևի արձակի զարգացման ուղիները։ Նրա գրչին են պատկանում «Բալզակի ստեղծագործության էվոլյուցիան» (1945 թ.), «Ֆլորերի ստեղծագործությունը» (1955 թ.), «Ատենդալ։ Ուսումնասիրության տարիներ» (1968 թ.), «Ժոք Լոնգի, Գոնտուր եղբայրների, Զուլայի ստեղծագործությունները լուսաբանող և մի շարք այլ ուսումնասիրություններ։

Այդ հսկայական մտահղացումը իրականացնելիս գիտնականի պրպտող միտքն ընթացել է ուրույն, ոչ միշտ գրական պրոցեսի ժամանակագրությանը համապատասխան ուղիով և, այնուամենայնիվ, նա ընդգրկել է այդ պրոցեսը զարմանալիորեն հետևողական և ամբողջական։

Ռեիզովի «XIX դարի Ֆրանսիական վեպը» (1969 թ.) աշխատությունը հանրագումարային է։ Նրանում մեծ ընդհանրագումարով ներկայացված է վեպի զարգացման ամբողջ ընթացքը՝ XIX դ. իր բազմակողմանի առնչություններով, ինչպես անցյալի ավանդույթների և օտար օրինակների, այնպես էլ քաղաքական-պատմական անցուղարձերի, սոցիալական վիճակի և հասարակական մտքի ուղղության հետ կապակցված։

Նա հետևողականորեն պայքարել է արևմտաեվրոպական գրական երևույթների վուլգար

սոցիոլոգիական մեկնաբանությունների դեմ, միաժամանակ ձգտելով սոցիոլոգիզմին տալ նոր, իրոք գիտական բնույթ։

XIX դ. Ֆրանսիական գրականությունը դիտելով որպես 1789 թ. հեղափոխության խառնված հասարակական մտքի զարգացման տարբեր փուլերի արտացոլում, որը ծառայել է այդ հասարակության առջև ծառացող հերթական խնդիրների լուծմանը, Ռեիզովը հետազոտել է ժամանակի պահանջները գրողի սուբյեկտիվ գիտակցությանը ընդլայնելու և դրանց համեմատ գեղարվեստական միջոցներ որոնելու և մշակելու պրոցեսները։ Հնդ որում Ռեիզովը միշտ կարողանում է դարաշրջանի բարդ նկարագրի, խճճված գաղափարական հոսանքների և առերևույթ իրարամբոժ ու հակասական դրական երևույթի մեջ ի հայտ բերել տվյալ ժամանակի հիմնական միտումների միասնական արտահայտությունը։

Այդ նկատի ունենալով է, որ նա առաջարկում է գրականության պատմության շրջանները սահմանել ըստ տվյալ ազգի կյանքի փուլերի։ Այսպես, Ֆրանսիական XIX դ. գրականության պատմությունը բաժանել կայսրության, Ռեստավրացիայի, Հուլիսյան միապետության, Երկրորդ կայսրության և այլ շրջանների։

Ռեիզովը իր գրականության պատմությունը հիմնում է մոնոմենտալ տեսական կառուցվածքների վրա, ինչպիսիք են ուսմանտիգմի, պատմավեպի ժանրի, Ստենդալի, Ֆլորերի և Սկոտի գեղագիտության նրա տեսությունները։ Նա համարվում է ուսմանտիգմի գրականության ժամանակակից խոշորագույն գիտակներից և ստեղծագործող տեսաբաններից մեկը։ Արևմտաեվրոպական ուսմանտիգմի իր ուսումնասիրություններում Ռեիզովը գնացել է նոր ուղիներով։ Նոր հարցադրման և փաստարկների միջոցով նա հերքել է մի շարք հնացած, վուլգար սոցիոլոգիական բնութագրումներ և քաղաքած ձևակերպումներ. «Կլասիցիզմի և ուսմանտիգմի միջև» (1962 թ.), «Վ. Սկոտի ստեղծագործությունը» (1965 թ.), «Ֆրանսիական պատմավեպը ուսմանտիգմի դարաշրջանում», «Ֆրանսիական ուսմանտիկական պատմագրություն» այդ ընթացի առաջօր միակ ամբողջական ընդգրկում հանդիսացող մենագրությունը։

Պրոֆ. Ռեիզովը մեծ ավանդ ունի արտասահմանյան գրականության բարձրորակ մասնագետներ պատրաստելու, այդ առարկայի պատմությունը և դասավանդման մեթոդիկան մշակելու գործում։ Զափազանք բեղմնավոր է նրա գործունեությունը որպես հրատարակությունների կազմակերպչի։ Նրա խմբագրությանը լույս են տեսել դասագրքեր, գիտական աշխատությունների բազմաթիվ ժողովածուներ, մենա-

դրություններ և այլն: Պրոֆ. Ռեիզովի անմիջական հսկողությամբ և մասնակցությամբ իրականացվել են արեմտանվրոպական մի շարք դասականների երկերի ժողովածուների հրատարակությունները (Ստենդալ, Բալզակ, Վլատեր Սկոտ, Անատոլ Զրանս, Ժորժ Սանդ և այլն), որոնք իրենց դիտական ապարատի բարձր մակարդակով իրավամբ համարվում են լավագույնները:

Ռեիզովը մի շարք անգամներ եղել է Հայաստանում, նա դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանում և Բյուսպի անվան ուսաց և օտար լեզուների ինստիտուտում, ստեղծագործական կապերով կապված է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ: Պրոֆ. Ռեիզովը գործուն մասնակցություն ունի եվրոպական գրականության հալ մասնագետներ պատրաստելու ասպարեզում: Հանձին նրա, հալ բանասերներն

ունեն բանիմաց և պատրաստակա խորհրդատու:

Ռեիզովը հանաչված է նաև արտասահմանում, նրա դասախոսությունները Ֆրանսիայում, Բուլղարիայում և այլուր մեծ հետաքրքրություն են առաջացրել, նրա մի քանի մենագրությունները թարգմանվել են ֆրանսերեն և լեհերեն: Վերջերս նրան շնորհվել է Կլեմմոնի (Ֆրանսիա) համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

Պրոֆեսոր Ռեիզովը լի է նոր մտահղացումներով: 1971 թ. նա լույս ընծայեց «Եվրոպական գրականությունների պատմությունից» ժողովածուն և աշխատում է Ստենդալի ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրության երկրորդ և երրորդ հատորների վրա:

Ռեիզովի գործունեությունն ըստ արժանվույն գնահատվել է կառավարական պարգևներով:

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ